# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, ararataygestan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 դեկտեմբերի 2013թվականի N 22

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ:

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի հանրապետության օրենքով

համայնքի վարչական տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

<u>Հիմնական օբյեկտների համար</u>

ա/ մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բ/ 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000 դրամ,

501-ից 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,

1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40000 դրամ:

<u>Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար</u>

գ/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ,

դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 4000 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացնող աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար սահմանված կարգով հաստատված

ճարտարապետաշինարարական նախագծով
ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 2000 դրամ,
բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,
գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների շինարարության կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Շենքեր, շինություններ, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝ 5000 դրամ:
/1;2;3 կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ/:
4. Համայնքի տարածքում՝
1/ Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ
2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել տեղական տուրք 3000 դրամ:
3/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար սահմանել 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:
4/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար սահմանել 200000 դրամ:
5/ Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30000 դրամ:
6/ Հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել
ա/ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 2000 դրամ
բ/ ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 1000 դրամ:
7/ յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանել տեղական տուրք

ա/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ,
բ/ այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ:
8/ մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույտվության համար ընթացիկ տարվա համար սահմանել տեղական տուրք 10000 դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերի սահմանում
ա/ շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ գուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ,
բ/ գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, ետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար՝ 2000 դրամ,
գ/ մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 500 դրամ:
դ/ աղբահանություն կազմակերպելու համար՝ յուրաքանչյուր ամիսը բնակչից՝ 10 դրամ:

Կողմ (6) Դեմ (0) Չեզոնպահ (0)

Հ.ԱՎԱԳՅԱՆ
Կ.ԹԵԼԼԻՅԱՆ
Յ.ՀԱԿՈԲՅԱՆ
Ս.ՀԱՍՐԱԹՅԱՆ
Օ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՅԳԵՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratygestan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 դեկտեմբերի 2013թվականի N 23

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 26 կետով

Հաստատել Այգեստան գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի, համայնքի բյուջետային հիմնարկների աշխատակիցների հետևյալ թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

| *Հաստիքի անվանումը* | *Հաստիքային միավորը* | *Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/* |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | - | 163400 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 106900 |
| Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար | 1 | 106900 |
| Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 105800 |
| Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /գլխ.հաշվապահ/ | 1 | 104700 |
| Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /գյուղ.գծով մասնագետ/ | 1 | 104700 |

| | | |
|---|---|---|
| Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /հաշվետար-գանձապահ/ | 1 | 83800 |
| Գործավար | 1 | 59524 |
| Օպերատոր | 1 | 59524 |
| Հավաքարար | 1 | 59524 |
| Այգեպան-պահակ | 1 | 59524 |

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

| *Հաստիքի անվանումը* | *Հաստիքային միավորը* | *Պաշտոնային դրույքաչափը դրամ/* /22 |
|---|---|---|
| Մշակույթի տան տնօրեն | 1 | 59524 |
| հավաքարար | 1 | 59524 |

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

| *Հաստիքի անվանումը* | *Հաստիքային միավորը* | *Պաշտոնային դրույքաչափը դրամ/* /22 |
|---|---|---|
| տնօրեն | *1* | *125000* |
| հաշվապահ | *1* | 59524 |
| բուժքույր | *1* | 59524 |
| դաստիարակ | *5* | *297620* |
| երաժշտ.դաստ. | *1* | 59524 |
| դաստ.օգնական | *3* | *178572* |
| խոհարար | *1* | 59524 |
| խոհարարի օգն. | *1* | 59524 |
| դոնապահ | *1* | 59524 |
| լվացքարար | *1* | 59524 |
| պահակ | *1* | 59524 |

Կողմ (6) Դեմ (0) Չեռնպահ (0)

Հ.ԱՎԱԳՅԱՆ
Կ.ԹԵԼԼԻՅԱՆ
Յ.ՀԱԿՈԲՅԱՆ
Ս.ՀԱՍՐԱԹՅԱՆ
Օ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՅԳԵՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ